Կարգապահական գործ թիվ ԿԳ-15027

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 230-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/146-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

14.10.2015թ.-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Արա Զաքարյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 314) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

07.04.2015թ-ին Պալատում մուտքագրվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող) որոշումը /դատավոր Ա. Մկոյան, քրեական գործ թիվ ԼԴ/0065/01/14/՝ փաստաբան Ա. Զաքարյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին: Նշված որոշման համաձայն՝ փաստաբան Ա. Զաքարյանի կողմից դատարանի նկատմամբ դրսևորվել է անհարգալից վերաբերմունք /նիստին չներկայանալը/, որը նպատակ է հետապնդում նիստերը անհիմն ձգձգել և խոչընդոտել նիստերի բնականոն ընթացքը, ինչից ելնելով դատարանը որոշել է փաստաբան Ա. Զաքարյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել ՀՀ փաստաբանների պալատին:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.

2015 թվականի ապրիլի 28-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 92-Ա/ԿԳ-15027 որոշումը, համաձայն որի որոշվել է.

«1. Փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր թիվ 314) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-15027):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանին (դատավոր Աղասի Մկոյան):

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

- սույն որոշման մեկական օրինակ ուղարկել փաստաբան Արա Զաքարյանին՝ պարզաբանելով նրան «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները»:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմող՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Աղասի Մկոյան) իր կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 27.03.2015թ. դիմումով և կից 26.03.2015թ-ի փաստաբան Ա. Զաքարյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) հայտնել է, որ Դիմողի վարույթում է գտնվում թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործն ըստ մեղադրանքի Տիգրան Նորիկի Մելիքյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նշված գործով 24.03.2015թ-ին նշանակված հերթական դատական նիստին որպես ամբաստանյալ Տիգրան Նորիկի Մելիքյանի պաշտպան ներկայացել է Պալատի փաստաբան Արա Զաքարյանը, ով խնդրել է գործի նյութերին ծանոթանալու համար տրամադրել մեկ ամիս ժամանակ: Դատարանը որոշել է գործի նյութերին ծանոթանալու համար պաշտպանին տրամադրել 2 աշխատանքային օր, նույն օրը երեկոյան նրան հանձնելով քրեական գործի նյութերի պատճենները և դատական նիստերի լազերային կրիչները:

26.03.2015թ-ին ժամը 13:00-ին նշանակված հերթական դատական նիստի ժամանակ փաստաբան Արա Զաքարյանը ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել դատավորին: Դատարանը որոշում կայացնելու համար հեռացել է

խորհրդակցական սենյակ, հայտարարելով, որ որոշման հրապարակումը կլինի նույն օրը ժամը 16:00-ին: Նշված ժամին, բացի պաշտպանից, ներկայացել են դատավարության բոլոր մասնակիցները: Որոշումը հրապարակելուց հետո, դատարանի հարցին ամբաստանյալը պատասխանել է, որ պաշտպանի չներկայանալու պատճառների մասին ինքը տեղյակ չէ: Դատական նիստին չներկայանալու պատճառների մասին պաշտպանը չէր տեղեկացրել նաև դատարանին:

Դիմողը Որոշման մեջ նշել է, որ պաշտպանի կողմից դատական նիստին չներկայանալը գնահատում է որպես անհարգելի և նիստերը անհիմն ձգձգելու նպատակ, նիստերի բնականոն ընթացքի խոչընդոտում, որի պատճառով դատարանը որոշել է փաստաբան Ա. Զաքարյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է դրա տեղի և վայրի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը</u>

Պատասխանող Արա Զաքարյանը, ներկայանալով սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին, հայտնել է, որ թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով որպես ամբաստանյալի պաշտպան ներգրավվել է 24.03.2015թ-ին՝ դատական նիստի ընթացքում: Այդ պահին գործով դատաքննությունը եղել է ավարտված և մեղադրական ճառով պետք է հանդես գար մեղադրանքը պաշտպանող դատախազը: Պատասխանողը դատարանին ներկայացրել է միջնորդություն՝ գործի նյութերին ծանոթանալու համար մեկ ամիս ժամանակ տրամադրելու մասին: Դատարանը որոշել է գործի նյութերին ծանոթանալու համար պաշտպանին տրամադրել 2 աշխատանքային օր, նույն օրը երեկոյան նրան հանձնելով քրեական գործի նյութերի պատճենները և դատական նիստերի լազերային կրիչները, միաժամանակ հաջորդ դատական նիստը նշանակելով 26.03.2015թ-ին ժամը 13:00-ին:

Գտնելով, որ դատարանի նման որոշումն անօրինական է, ինչպես նաև կասկածներ է հարուցում դատավորի անկողմնակալության և բավարար մասնագիտական պատրաստվածության մեջ, քանի որ անաչառ դիտորդի համար ակնհայտ էր, որ 37 ժամվա ընթացքում ֆիզիկապես անհնար է ընթերցել 1000 էջից ավելի գործի նյութերը, լսել շուրջ 25 ժամ տևած դատական նիստերի արձանագրությունները, և տեսակցել պաշտպանյալին, Պատասխանողը թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով 26.03.2015թ-ին ժամը 13:00-ին հրավիրված դատական նիստի ժամանակ ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություն:

Դատարանը որոշում կայացնելու համար հեռացել է խորհրդակցական սենյակ, հայտարարելով, որ որոշման հրապարակումը կլինի նույն օրը ժամը 16:00-ին: Միջնորդության հրապարակմանը Պատասխանողը չի ներկայացել, քանի որ գտել է, որ կողմնակալ դատարանը, որը ոտնահարում է իր պաշտպանյալի պաշտպանության իրավունքը, միևնույնն է մերժելու է ինքնաբացարկի միջնորդությունը, և նիստին չներկայանալով իր բողոքն է հայտնել դատարանի ապօրինությունների դեմ:

Նշել է նաև, որ թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 31.07.2015թ-ին կայացված որոշմամբ պաշտպանության իրավունքի խախտման հիմքով բեկանվել է առաջին ատյանի մեղադրական դատավճիռը և գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության համար:

Բացի վերոնշված բացատրությունից Պատասխանողը ներկայացրել հետևյալ փաստաթղթերը՝

1) Իր կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդության օրինակը,

2) Թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ-ի որոշման պատճենը:

<u>4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Դավիթ Հունանյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2015 թվականի հունիսի 29-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Պատասխանող Արա Զաքարյանի արարքում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների առկայության փաստը կախված է նրանից՝ արյոք Արա Զաքարյանը չի ներկայացել դատարանի որոշման հրապարակմանը չարամտորեն, թե ունեցել է որևիցէ հարգելի պատճառ: Կարգապահական գործը նախապատրաստողին չի ներկայացվել որևիցէ ապացույց հարգելի պատճառի վերաբերյալ»:

<u>5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված

լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի կողմից խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, ինչը հաստատվում է թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ,

2. Գործի նյութերին ծանոթանալու միջնորդություն ներկայացնելու պահին թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործը բաղկացած է եղել 5 հատորից /ավելին քան 1000 էջ/, գործով տեղի են ունեցել շուրջ 20 դատական նիստ, Պատասխանողի պաշտպանյալը մեղադրվել է առաձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ, ինչը հաստատվում է Դիմողի Որոշմամբ, Պատասխանողի բացատրությունով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ և ինքնաբացարկի միջնորդությամբ,

3. Դիմողի կողմից գործի նյութերին ծանոթանալու համար Պատասխանողին տրամադրվել է 37 ժամ /որից աշխատանքային ժամերը՝ 12/, ինչը հաստատվում է Դիմողի Որոշմամբ, Պատասխանողի բացատրությունով և ինքնաբացարկի միջնորդությամբ,

4. Պատասխանողը չի ներկայացել 26.03.2015թ-ին ժամը 16:00-ին նշանակված դատական նիստին, և չներկայանալու մասին չի նախազգուշացրել, ինչը հաստատվում է Դիմողի Որոշմամբ և Պատասխանողի բացատրությունով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.10.2015թ. տրամադրված տեղեկանքի և դրա հավելվածի համաձայն Պատասխանող Արա Զաքարյանը փաստաբանի արտոնագիր է ստացել 16.03.1999թ.-ին: 2006-2015թթ. վերջինիս նկատմամբ հարուցվել է 3 կարգապահական վարույթ, որոնցից մեկը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով, իսկ երկու կարգապահական վարույթը վերացվել են, ինչպես նաև առկա է մեկ ընթացիկ կարգապահական վարույթ՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ 2015 թվականի ապրիլի 28-ին հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն. «Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն. «Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

Դիմողի կողմից Որոշմամբ ներկայացված դիրքորոշման համաձայն՝ չներկայանալով դատական նիստին Պատասխանողը դատարանի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք:

Պատասխանողի դիրքորոշման համաձայն՝ նիստին չներկայանալու պատճառը եղել է այն, որ դատարանը՝ խախտելով պաշտպանության իրավունքը, նրան չի տրամադրել անհրաժեշտ և ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու համար, որպիսի պայմաններում նա չէր կարող արդյունավետ ներկայացնել իր պաշտպանյալի շահերը:

Հաշվի առնելով այն, որ գործի նյութերին ծանոթանալու միջնորդություն ներկայացնելու պահին թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործը բաղկացած է եղել 5 հատորից /ավելին քան 1000 էջ/, գործով տեղի են ունեցել շուրջ 20 դատական նիստ, Պատասխանողի պաշտպանյալը մեղադրվել է առաձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ, սակայն Դիմողի կողմից գործի նյութերին ծանոթանալու համար

Պատասխանողին տրամադրվել է 37 ժամ /որից աշխատանքային ժամերը՝ 12/, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը 26.03.2015թ-ի ժամը 16:00-ի դատական նիստի դրությամբ զրկված է եղել որպես պաշտպան իր իրավունքները արդյունավետ իրականացնելու և որպես փաստաբան իր պարտականությունները պատշաճ կատարելու հնարավորությունից, որպիսզիի պայմաններում ստիպված է եղել չներկայանալ դատական նիստին, քանի որ վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն չիրականացնելու պայմաններում ոչ պատշաճ իրականացնելով իր պաշտպանյալի իրավունքների և շահերի պաշտպանությունը կարող էր վատթարացնել վերջինիս դրությունը:

Բացի այդ, Խորհուրդը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ արձանագրվել են Դիմողի կողմից Պատասխանողի պաշտպանյալի իրավունքների էական խախտումներ, որոնց հիմքով Դիմողի կողմից կայացված մեղադրական դատավճիռը բեկանվել է և գործն ուղարվել է ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Փաստորեն, Պատասխանողի կողմից դատական նիստին չներկայանալը եղել է Դիմողի կողմից Պատասխանողի պաշտպանյալի պաշտպանության իրավունքի խախտման հետևանք:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ փաստաբանը դատարանի հետ հարաբերություններում միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ, ինչպես նաև պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից, ինչը ենթադրում է նաև վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Խորհուրդը Պատասխանողի կողմից դատական նիստին չներկայանալը չի գնահատում որպես դատարանին /դատավորին/ չհարգելու դրսևորում, քանի որ Պատասխանողի նման պահվածքն ուղղված է եղել իր պաշտպանյալի իրավունքների ու շահերի պաշտպանությանը և դրա պատշաճ իրականացմանը, ուստի տվյալ դեպքում՝ դատարանի անօրինական գործողությունների և իր պաշտպանյալի պաշտպանության իրավունքի խախտումների պայմաններում, Պատասխանողը գործել է ելնելով իր պաշտպանյալի նպաստավոր շահերից:

Վերը նշվածի լույսի ներքո Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի գործողություններում բացակայում են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման հատկանիշները, ուստի բացակայում է նաև կարգապահական խախտման դեպքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ հոդվածի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր՝ 314) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արա Զաքարյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Կարեն Սարդարյան**